ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 220-Ա

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 11-րդ հոդվածը և «Պետական պարտքի մասին» օրենքի 23-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սույն որոշմամբ նախատեսված պայմանները բավարարելու դեպքում «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկային համակարգից մինչև հինգ տարի մարման ժամկետով մինչև 9 (ինը) տոկոս անվանական տոկոսադրույքով վարկային միջոցներ ներգրավելու նպատակով տրամադրել ընդհանուր մինչև 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ԱՄՆ-ի դոլար գումարի չափով բյուջետային երաշխիք (երաշխիքներ)՝ կնքելով համապատասխան պայմանագիր՝ որպես բյուջետային երաշխիքի վճարումից ծագող հետադարձ պահանջի ապահովման միջոց ընդունելով երաշխիքով ապահովված վարկային պարտավորության ապահովման նպատակով հօգուտ առևտրային բանկերի ձևակերպված հաջորդող գրավը:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետում նշված բյուջետային երաշխիքի բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:

3. Բյուջետային երաշխիքի թողարկումն իրականացնել վարկի մարման ժամանակացույցը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ համաձայնեցնելուց հետո՝ պայմանով, որ՝

1) վարկատուի (վարկատուների) և ընկերության միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ընկերության կողմից իրականացվող յուրաքանչյուր հերթական կամ արտահերթ վճարվող գումարից առաջնահերթ պետք է մարվի տրամադրվող վարկի հիմնական գումարի բյուջետային երաշխիքով ապահովված պարտավորությունը.

2) վարկի տոկոսագումարների կամ այլ վճարումների իրականացումը կարող է կատարվել միայն վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի հիմնական գումարի հերթական վճարման համար նախատեսված գումարի ամբողջական մարումից հետո.

3) վճարումների (մարումների) գծով արտոնյալ ժամանակաշրջան կարող է նախատեսվել, միայն եթե այն տրամադրվում է վարկի և տոկոսագումարների համար միաժամանակ և նույն ժամանակահատվածի համար.

4) վարկի մարման ժամանակացույցով նախատեսված յուրաքանչյուր հերթական վճարվող գումարի կազմում վարկի տոկոսագումարը և այլ վճարումները միասին չեն կարող գերազանցել վարկի հիմնական գումարի մեծությունը:

4. Սահմանել, որ բյուջետային երաշխիքը տրամադրվում է, եթե սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ընկերությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում անկախ աուդիտորական կազմակերպության կողմից հաստատված ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված հաշվեկշռային ակտիվների շուկայական գնահատման հաշվետվություն, որով հաստատում է, որ երաշխիքի գումարը երաշխիքի ստացման համար դիմելու և երաշխիքը թողարկելու պահի դրությամբ չի գերազանցում ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված հաշվեկշռային ակտիվների շուկայական արժեքի 20 տոկոսը:

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշմամբ նախատեսված պայմանները բավարարելու դեպքում ապահովել բյուջետային երաշխիքի թողարկումը և համապատասխան պայմանագրի կնքումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ